Հաստատում եմ՝
ՀԳՊԱ հոգաբարձուների
խորհրդի նախագահ

«25» հոկտեմբերի 2017թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի (այսուհետ՝ ՀԳՊԱ) ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդների առաջադրման, ընտրությունների անցկացման, ռեկտորի նշանակման և նրա հետ աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:

1.2. ՀԳՊԱ կանոնադրության համապատասխան սույն ընթացակարգը հաստատում է ՀԳՊԱ հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ):

1.3. ՀԳՊԱ-ի ռեկտորի ընտրությունների կազմակերպման և անցկացման ծախսերը կատարվում են ՀԳՊԱ-ի միջոցների հաշվին:

2.ՀԳՊԱ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2.1 ՀԳՊԱ ռեկտորի թափուր պաշտոն առաջանալու դեպքում հոգաբարձուների խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ (այսուհետ՝ մրցույթ):

2.2. Մրցույթի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ, առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում, ինչպես նաև ՀԳՊԱ ինտերնետային կայքում մրցույթի մասին հրապարակվում է հայտարարություն, որում զետեղվում է սույն կանոնակարգի 2.3 կետով սահմանված տեղեկատվությունը: Հրապարակումը պետք է կրկնվի առաջին հրապարակումից հետո՝ 5 օրյա ժամկետում: Հրապարակումները կազմակերպում է խորհրդի նախագահը:

2.3. Հայտարարության տեքստում պարտադիր նշվում է՝

ա) մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի ընդունման վայրը և ժամկետները,

բ) մրցույթի անցկացման վայրը, օրը և ժամը,

գ) մրցույթին մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սույն կանոնակարգի 2.4 կետին համապատասխան,

դ) հավակնորդներին ներկայացվող պահանջները՝ սույն կանոնակարգի 3.2 կետին համապատասխան:

2.4. Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) դիմում հոգաբարձուների խորհրդի նախագահի անունով,

բ) անձը հաստատող փաստաթղթի պատճեն (լուսանկարի, բնակության վայրի նշագրումով էջերի),

գ) գունավոր լուսանկար 35x45 մմ չափի,

դ) քաղվածք աշխատանքային գրքույկից,

ե) ինքնակենսագրություն,

զ) բարձրագույն կրթության դիպլոմի, գիտական աստիճանը և (կամ) գիտական կոչումը հավաստող վկայականների պատճենները,

է) կադրերի հաշվառման լրացված անձնական թերթիկ,

ը) հրատարակված գիտական, ստեղծագործական աշխատանքների, մասնակցած ցուցահանդեսների, անհատական ցուցահանդեսների ցուցակ,

թ) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),

ժ) հավակնորդի գործունեության ծրագիր՝ փակ և ստորագրված ծրարով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:

2.5. ՀԳՊԱ ռեկտորի թափուր պաշտոնում ընտրվելու համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի ընդունումը ավարտվում է մրցույթի անցկացումից 10 օր առաջ:

2.6. ՀԳՊԱ ռեկտորի թափուր պաշտոնի համար ացկացվող մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (համարակալած և յուրաքանչյուր էջի ետևի մասում ստորագրած) հանձնվում է հոգաբարձուների խորհրդի քարտուղարին՝ առձեռն:

2.7. Հայտերը ընդունելիս խորհրդի քարտուղարը ստուգում է հայտի համապատասխանությունը սույն կանոնակարգի 2.4 կետում ներկայացված պահանջներին: Փաստաթղթերի թերի լինելու դեպքում հավակնորդը տեղեկացվում է այդ մասին նույն պահին, իսկ դրա անհնարության դեպքում՝ 1 օրվա ընթացքում: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում:

2.8. Սույն կանոնակարգի 2.4 կետում ներկայացված պահանջներին փաստաթղթերի համապատասխանության դեպքում հավակնորդին տրամադրվում է փաստաթղթերի հանձնումը հավաստող տեղեկանք:

2.9. Հայտերի ընդունման ավարտի հաջորդ օրը խորհրդի քարտուղարը ընդունված փաստաթղթերի փաթեթը կից գրությամբ հանձնում է հոգաբարձուների խորհրդի նախագահին:

2.10. Խորհրդի նախագահը մրցույթի անցկացումից առնվազն 7 օր առաջ՝

ա) խորհրդի անդամներին է ուղարկում յուրաքանչյուր հավակնորդի ներկայացրաց փաստաթղթերի պատճենները,

բ) կազմակերպում է հավակնորդների անվան և ազգանվան, գիտական աստիճանի և/կամ կոչման, զբաղեցրած պաշտոնի, ինչպես նաև առաջադրման եղանակի վերաբերյալ տեղեկատվության տարածում ՀԳՊԱ-ում (ՀԳՊԱ ինտերնետային կայքում, հայտարարությունների տախտակներին և այլն),

գ) ապահովում է փաստաթղթերի պատճենների առկայությունը ՀԳՊԱ գրադարանում:

3. ՀԳՊԱ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. ՀԳՊԱ ռեկտորի թափուր պաշտոնի թեկնածուները առաջադրվում են ինքնաառաջադրմամբ:

3.2. ՀԳՊԱ ռեկտորի թեկնածու կարող է առաջադրվել ՀՀ այն քաղաքացին, ով ունի գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում, բուհում դասավանդման փորձ և վերջին 15 տարվա ընթացքում առնվազն 10 տարվա հանրային կառավարման կամ բարձրագույն կրթության համակարգում առնվազն 5 տարվա վարչական աշխատանքի ստաժ: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:

3.3. ՀԳՊԱ ռեկտորի ընտրության օրվան նախորդող օրերի ընթացքում ՀԳՊԱ գիտխորհուրդը կամ այլ ստորաբաժանում կարող է քննարկում կազմակերպել հավակնորդների վերաբերյալ և հոգաբարձուների խորհրդին ներկայացնել կարծիք:

4. ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

4.1. Ռեկտորի ընտրության համար գումարված խորհրդի նիստը նախապատրաստում և ղեկավարում է ՀԳՊԱ խորհրդի նախագահը: ՀԳՊԱ ռեկտորի ընտրության նիստը դռնփակ է (բացառություն է արվում ռեկտորի պաշտոնի հավակնորդների և այլ հատուկ հրավիրված անձանց համար):

4.2. Խորհրդի՝ ռեկտորի ընտրության համար գումարված նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

4.3. Նիստի օրակարգը հետևյալն է.

ա) հավակնորդների՝ սույն կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում,

բ) թեկնածուների ծրագրերի ներկայացում,

գ) հարցերի ներկայացում հավակնորդներին և խորհրդի անդամների ելույթներ,

դ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,

ե) ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն,

զ) ռեկտորի ընտրության արդյունքների հայտարարում և որոշման կայացում:

4.4. Բացառությամբ սույն կանոնակարգի 4.6 և 5.18 կետերով նախատեսված որոշումների, խորհրդի մյուս որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.5. ԵԳՊԱ-ի խորհրդի նիստին ռեկտորի պաշտոնի հավակնորդի ներկայությունը պարտադիր է, սակայն նրա բացակայությունը հիմք չէ նրա թեկնածությունը

քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար՝ բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի:

4.6. Օրակարգի առաջին հարցով խորհրդի քարտուղարը զեկուցում է ռեկտորի թեկնածուների սույն ընթացակարգի պահանջներին բավարարելու հարցը: Հարցի ներկայացումից հետո զեկուցողը պատասխանում է առաջացած հարցերին: Խորհրդի ցանկացած անդամ կարող է առաջարկ ներկայացնել անձին թեկնածուների ցուցակից հանելու վերաբերյալ՝ հիմնավորվելով, թե սույն ընթացակարգի որ պահանջներն են խախտված և եթե խախտվել է սույն ընթացակարգի 3.2. կետը: Հավակնորդին ցուցակից հանելու առաջարկը խորհրդի նախագահի կողմից դրվում է քվեարկության: Հավակնորդը հանվում է ցուցակից, եթե առաջարկին կող է քվեարկել նիստին ներկա անդամների առնվազն երկու երրորդը:

4.7. Օրակարգի երկրորդ հարցով խորհրդի նախագահը ելույթների համար, ըստ ազգանունների այբբենական կարգի, ձայնը տալիս է հավակնորդներին: Յուրաքանչյուր հավակնորդ ունի ոչ ավելի քան 10 րոպե տևողությամբ ելույթի իրավունք: Յուրաքանչյուր հավակնորդի ելույթից հետո խորհրդի նախագահը հայտարարում է հարցերի առաջին հերթագրում, որից հետո խորհրդի հերթագրված անդամները, ըստ հերթագրման հերթականության, ստանում են հավակնորդին հարց տալու հնարավորություն: Թեկնածուին տրվող հարցերը կարող են վերաբերել միայն նրա կողմից ներկայացված փաստաթղթերին, ծրագրային ելույթին կամ նախկին աշխատանքային գործունեությանը: Հարցերն ու պատասխանները արձանագրվում են խորհրդի քարտուղարի կողմից:

4.8. Առաջին հերթագրման արդյունքում տրված հարցերին թեկնածուի պատասխանելուց հետո խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության հայտարարում է հարցերի երկրորդ հերթագրում՝ սույն ընթացակարգի 4.7 կետով նախատեսված կարգով:

4.9. Բոլոր հավակնորդներին ուղղված հարցերի և նրանց պատասխանների ավարտից հետո սկսվում է քննարկում: Խորհրդի անդամների ելույթները կարող են դադարեցվել խորհրդի որոշմամբ: Ելույթ ունեցողներին հարցեր չեն տրվում:

4.10. Խորհրդի նիստերը կարող են ընդմիջվել խորհրդի որոշմամբ:

4.11. Եթե գաղտնի քվեարկությունը չի սկսվել մինչև ժամը 19:00, նիստը ընդմիջվում է մինչև հաջորդ օրը՝ ժամը 09:30՝ անկախ նրանից, հաջորդ օրն աշխատանքային է, թե ոչ: Եթե գաղտնի քվեարկությունը սկսվել է, ապա նիստը շարունակվում է մինչև քվեարկության ավարտը և ընտրության արդյունքների մասին որոշման կայացումը:

5. ՀԳՊԱ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Նիստում քննարկումից հետո խորհրդի նախագահը, ըստ ազգանունների այբբենական հերթականության, հրապարակում է հավակնորդների ազգանունները և անունները: Եթե վերջիններս իրենց անունը հրապարակելու պահին ինքնաբացարկ չեն հայտնում, ապա նրանց թեկնածությունը ներառվում է քվեաթերթիկում:

5.2. Խորհրդի նախագահը ներկայացնում է գաղտնի քվեարկության կարգը:

5.3.Խորհուրդն իր կազմից ընտրում է 5 անդամներից բաղկացած հաշվիչ հանձնաժողով:

5.4. Հաշվիչ հանձնաժողովի անդամների թեկնածուներին առաջադրում են խորհրդի անդամները: Ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդ հանդիսացող խորհրդի անդամները չեն կարող առաջադրվել և առաջադրել հաշվիչ հանձնաժողովի անդամության թեկնածուներ: Հաշվիչ հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի առաջադրումից հետո կազմակերպվում է քվեարկություն: Առաջադրումներն ու քվեարկությունները շարունակվում են մինչև հանձնաժողովի կազմի համալրումը:

5.5. Հաշվիչ հանձնաժողովը՝

ա) իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ և քարտուղար,

բ) կազմակերպում և անցկացնում է քվեարկությունը,

գ) ամփոփում և արձանագրում է ՀԳՊԱ ռեկտորի ընտրության քվեարկության արդյունքները,

դ) հրապարակում է ՀԳՊԱ ռեկտորի ընտրության քվեարկության արդյունքները:

5.6. Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.7. Ռեկտորի ընտրությունների քվեաթերթիկները ստորագրվում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

5.8. Ռեկտորի ընտրությունների քվեաթերթիկում հավակնորդների ազգանունները նշվում են այբբենական կարգով: Յուրաքանչյուր թեկնածուի ազգանվան և անվան դիմաց առկա է «կողմ» գրառումով վանդակը: Քվեաթերթիկը պետք է պարունակի նաև «բոլորին դեմ» գրառումով վանդակ (հավելված 1.2): Մեկ թեկնածուի դեպքում նրա ազգանվան և անվան դիմաց առկա են «կողմ եմ» և «դեմ եմ» գրառումներով վանդակներ (հավելված 1.1):

5.9. ՀԳՊԱ խորհրդի անդամը հաշվիչ հանձնաժողովից քվեաթերթիկ ստանալիս ցուցակում ստորագրվում է իր ազգանվան դիմաց:

5.10. ՀԳՊԱ խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

5.11. Խորհրդի ընտրող անդամը քվեաթերթիկում համապատասխան նշում է կատարում իր նախընտրած թեկնածուի ազգանվան և անվան դիմաց՝ «կողմ» գրառմամբ վանդակում դնելով «V» նշանը: Եթե նա դեմ է բոլոր թեկնածուներին, ապա նշում է կատարում «բոլորին դեմ» գրառմամբ վանդակում (հավելված 1.2): Մեկ հավակնորդի առկայության դեպքում ընտրողը նշում է կատարում «կողմ» կամ «դեմ» գրառումներով վանդակներից միայն մեկում (հավելված 1.1):

5.12. Քվեարկությունն ավարտելուց հետո հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում է մեկական քվեաթերթիկ, հայտարարում է քվեաթերթիկում առկա արդյունքը և փոխանցում է հանձանաժողովի անդամներին՝ տեսակավորելու համար: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մինչև քվեատուփից հաջորդ քվեաթերթիկը հանելը կարող է պահանջել քվեարկության դնել տվյալ քվեաթերթիկի անվավեր լինելու հարցը:

5.13. Քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե չի համապատասխանում սույն ընթացակարգի 5.7, 5.10 և/կամ 5.11 կետերի պահանջներին, կամ պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում: Քվեաթերթիկի անվավերության վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի որոշումը ընդունվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.14. Հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (հավելված 2.1 կամ 2.2):

Արձանագրության մեջ գրառվում է՝

ա) քվեաթերթիկ ստացածների թիվը՝ ըստ ցուցակում առկա ստորագրությունների,

բ) քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

գ) անվավեր քվեաթերթիկների թիվը,

դ) հավակնորդ(ներ)ի ազգանուն(ներ)ը և յուրաքանչյուրի ստացած կողմ ձայների թիվը,

ե) «բոլորին դեմ» (մեկից ավելի թեկնածուների դեպքում) տրված ձայները:

5.15. Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ ցուցակը կազմվում է ըստ հավաքված «կողմ» ձայների քանակի նվազման հաջորդականության, իսկ հավաքված «կողմ» ձայների հավասարության դեպքում՝ ըստ ազգանունների այբբենական կարգի:

5.16. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները խորհրդի նիստում: Քվեարկության ընթացքի կամ քվեաթերթիկների հաշվարկման ընթացքի վերաբերյալ հանձնաժողովի՝ առարկություն ունեցող անդամը քվեարկության արդյունքները հրապարակելուց հետո կարող է ՀԳՊԱ խորհրդին ներկայացնել նախօրոք գրավոր շարադրված հատուկ կարծիք: Խորհուրդը բաց քվեարկությամբ իր վերաբերմունքն է արտահայտում ներկայացված բոլոր հատուկ կարծիքների վերաբերյալ:

5.17. Քվեարկության արդյունքերի հիման վրա ՀԳՊԱ խորհուրդը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) ՀԳՊԱ ռեկտոր ընտրվելու մասին,

բ) քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին,

գ) ընտրությունն անվավեր ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին,

դ) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին:

5.18. ՀԳՊԱ ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն հավակնորդը, ով ստացել է խորհրդի անդամների ընդհանուր թվի 50 տոկոսից ավել ձայներ (առնվազն 13 ձայն):

5.19. Առաջին փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները համարվում են չկայացած, իսկ ռեկտորը՝ չընտրված, եթե քվեարկված միակ թեկնածուն չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ ձայներ, կամ եթե քվեարկվել են երկու և ավելի թեկնածուներ, և նրանցից ոչ մեկը չի հավաքել անհրաժեշտ թվով ձայներ:

5.20. Քվեարկության երկրորդ փուլ անցկացվում է այն դեպքում, եթե քվեարկվել են երկու կամ ավելի հավակնորդներ, և նրանցից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Այս դեպքում երկրորդ փուլ են անցնում առավել թվով ձայներ հավաքած երկու թեկնածուները, եթե նրանք միասին հավաքել են խորհրդի նիստին ներկա անդամների թվի 50 տոկոսից ավել ձայներ, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները: Եթե առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները միասին չեն հավաքել խորհրդի անդամների ընդհանուր թվի 50 տոկոսից ավել ձայներ, ապա երկրորդ փուլ են անցնում առավել շատ թվով ձայներ հավաքած երեք, իսկ երրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները:

5.21. Երկրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) ՀԳՊԱ ռեկտոր ընտրվելու մասին,

բ) քվեարկության երրորդ փուլ անցկացնելու մասին,

գ) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին:

5.22. Երկրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները ճանաչվում են չկայացած, իսկ ռեկտորը համարվում է չընտրված, եթե թեկնածուները միասին չեն հավաքել խորհրդի անդամների ընդհանուր թվի 50 տոկոսից ավել ձայներ:

5.23. Քվեարկության երրորդ փուլ անցկացվում է այն դեպքում, եթե քվեարկության երկրորդ փուլի արդյունքում թեկնածուներից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Երրորդ փուլ են անցնում առավել շատ թվով ձայներ հավաքած երկու թեկնածուները, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները:

5.24. Երրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) ՀԳՊԱ ռեկտոր ընտրելու մասին,

բ) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին:

5.25. Երրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները ճանաչվում են չկայացած, իսկ ռեկտորը համարվում է չընտրված, եթե որևէ հավակնորդ չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ:

5.26. Ռեկտորի ընտրության արդյունքը ձևակերպվում է խորհրդի որոշման տեսքով: Որոշումը ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը: Որոշման մեկ օրինակը խորհրդի նախագահը ներկայացնում է լիազոր պետական մարմին:

5.27. Ռեկտորի ընտրության գործընթացն արտահայտող բոլոր փաստաթղթերը խորհրդի նիստի արձանագրության հետ միասին պահվում են ՀԳՊԱ-ում:

5.28. Ընտրությունների ընթացակարգի խախտումները և ընտրությունների արդյունքները կարող են բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.29. Ընտրությունները խորհրդի կողմից ճանաչվում են անվավեր, եթե ընթանում են ՀՀ օրենսդրության, ՀԳՊԱ կանոնադրության, սույն կանոնակարգի էական խախտումներով:

Եթե խախտումները տեղի են ունեցել մինչև ՀԳՊԱ խորհրդի մրցութային նիստը, ապա ընտրություններն անվավեր ճանաչելու դեպքում խորհուրդը հայտարարում է նոր մրցույթ:

Եթե խախտումները տեղի են ունեցել ՀԳՊԱ խորհրդի մրցութային նիստում կամ քվեարկության փուլում, ապա ընտրություններն անվավեր ճանաչելու դեպքում ՀԳՊԱ խորհուրդը հայտարարում է նոր քվեարկություն:

Հավելված 1.1

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Հոգաբարձուների խորհրդի «___» _____թ. նիստում (արձանագրություն թիվ ___)
ամսաթիվ, տարեթիվ
ռեկտորի ընտրության փակ (գաղտնի) քվեարկության

_____ կողմ ☐ դեմ ☐
թեկնածուի ազգանուն, անուն

**) Նշումը կատարվում է «կողմ» կամ «դեմ» գրառումներով վանդակներից միայն մեկում V նշանի տեսքով:*

Թեկնածությանը կողմ լինելու դեպքում նշում է կատարվում «կողմ», իսկ դեմ լինելու դեպքում «դեմ» գրառմամբ վանդակում:

Հավելված 1.2

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Հոգաբարձուների խորհրդի «___» _____թ. նիստում (արձանագրություն թիվ ___)
ամսաթիվ, տարեթիվ

ռեկտորի ընտրության փակ (գաղտնի) քվեարկության

Թիվ	*Թեկնածուի ազգանուն, անուն*	*Կողմ*	*Բոլորին դեմ*
1.			
2.			
3.			
4.			
5.			

**) Որևէ մեկ թեկնածությանը կողմ լինելու դեպքում քվեաթերթիկում V նշանի ձևով համապատասխան նշում է կատարվում նախընտրած թեկնածուի ազգանվան-անվան դիմաց՝ «կողմ» գրառմամբ վանդակում:*

Բոլոր թեկնածուներին դեմ լինելու դեպքում V նշանի ձևով համապատասխան նշումը կատարվում է «բոլորին դեմ» գրառմամբ վանդակում:

Հավելված 2.1

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Հոգաբարձուների խորհրդի «___» _____թ. նիստում (արձանագրություն թիվ ___)
ամսաթիվ, տարեթիվ

հետևյալ կազմով՝

1. _____(նախագահ),
2. _____(քարտուղար),
3. _____ ,
4. _____ ,
5. _____ ,

Խորհրդի 32 անդամներից ներկա էին ___- ը:
Քվեարկվել է ՀԳՊԱ ռեկտորի թեկնածությունը:
Քվեարկությանը մասնակցել են խորհրդի ___ անդամներ:
Բաժանվել է ____ քվեաթերթիկ:
Քվեատուփում առկա էր ____ քվեաթերթիկ:
Քվեարկության արդյունքներն են՝

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով _____ -ը
ազգանուն, անուն

ընտրված է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր:

Կամ՝

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտորի ընտրությունը համարվում է չկայացած:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____ _____
ստորագրություն *ազգանուն, անուն*

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ

1. _____ _____ ,
ստորագրություն *ազգանուն, անուն*
2. _____ _____ ,
ստորագրություն *ազգանուն, անուն*
3. _____ _____ ,
ստորագրություն *ազգանուն, անուն*

4. _____ _____:
ստորագրություն *ազգանուն, անուն*

Հավելված 2.2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Հոգաբարձուների խորհրդի «___» _____թ. նիստում (արձանագրություն թիվ __)
ամսաթիվ, տարեթիվ
հետևյալ կազմով՝

1. _____(նախագահ),
2. _____ (քարտուղար),
3. _____,
4. _____,
5. _____:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին ___- ը:
Քվեարկվել է ՀԳՊԱ ռեկտորի թեկնածությունները:
Քվեարկությանը մասնակցել են խորհրդի ___ անդամներ:
Բաժանվել է ____ քվեաթերթիկ:
Քվեատուփում առկա էր ____ քվեաթերթիկ:
Քվեարկության արդյունքներն են՝

ԹԻՎ	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ՁԱՅՆԵՐԻ ԹԻՎԸ
1.		
2.		
3.		
4.	Բոլորին դեմ	
5.	Անվավեր	

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով _____ -ը:
ազգանուն, անուն
ընտրված է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր:

Կամ՝

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտորի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում ՀԳՊԱ ռեկտոր, իսկ ներքոնշյալ թեկնածուները՝

1._____ _____,
ստորագրություն *ազգանուն, անուն*
2._____ _____ ,
ստորագրություն *ազգանուն, անուն*
3._____ _____:
ստորագրություն *ազգանուն, անուն*

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

Կամ՝

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտորի ընտրությունը համարվում է չկայացած:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝

_____ _____

ստորագրություն *ազգանուն, անուն*

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ

1._____ _____,

ստորագրություն *ազգանուն, անուն*

2._____ _____ ,

ստորագրություն *ազգանուն, անուն*

3._____ _____ ,

ստորագրություն *ազգանուն, անուն*

4._____ _____:

ստորագրություն *ազգանուն, անուն*